ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԶՈՐԱՅԻՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ա. Ն. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո սկսվեց Հայկական ՍՍՀ զորային կազմավորումների ստեղծումը, որը նպատակ ուներ պաշտպանելու հեղափոխության նվաճումները և նորաստեղծ սովետական հանրապետությունը։

Առաջին հայկական սովետական զորային կազմավորումը ստեղծվեց 1920 թ. դեկտեմբերի 2-ին։ Այն կոչվում էր Սովետական Հայաստանի բանվորա-գյուղացիական Կարմիր բանակ, որը կազմավորվեց ու կոփվեց Սովետական Ռուսաստանի Կարմիր բանակի օգնությամբ։ 1921 թ. մայիսից Սովետական Հայաստանի Կարմիր բանակի գլուխ կանգնեց Ալ. Մյասնիկյանը, որն օգտագործելով իր ռազմական հարուստ փորձը, հմտորեն ղեկավարում ու դաստիարակում էր բանակի մարտիկներին ու հրամանատարներին։ Զրույցներից մեկի ժամանակ Վ. Ի. Լենինը Ալ. Մյասնիկյանին հարցրել է. «արդյոք ոտքի՞ է կանգնել ավերված Հայաստանը... բավականաչափ ամո՞ւր է արդյոք ազգային Կարմիր բանակը»[1]։

Սովետական Հայաստանի Կարմիր բանակի զորամասերը սկզբում համալրվեցին ռուսական հին բանակի և հայկական ազգային զորագնդերի այն զինվորներով ու հրամանատարներով, որոնք կանգնած էին սովետական իշխանության դիրքերում, ինչպես նաև նոր զորակոչված բանվորներով, գյուղացիներով ու կամավորներով։ Հայաստանում քաղաքացիական կռիվների ժամանակ Կարմիր բանակն ավելի կոփվեց, ձեռք բերեց հարուստ մարտական փորձ ու քաղաքական գիտելիքներ։ Շուտով Սովետական Հայաստանի զինվորական գործերի ժողկոմ և Կարմիր բանակի հրամանատար նշանակվեց Հայկ Բժշկյանը։

Սովետական հանրապետությունների ռազմա-քաղաքական համագործակցության հետագա զարգացումը, Անդրֆեդերացիայի և ապա ՍՍՀՄ կազմավորման համար ծավալված շարժումն առաջ քաշեցին նաև ազգային զինվորական շինարարության հետագա զարգացման խնդիրը։ Այդ իսկ պատճառով Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ 1922 թ. փետրվարի 17-ին Անդրկովկասում Կարմիր բանակի ազգային զորամիավորումների ստեղծման հարցը հատուկ քննարկվեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյում[2]։

Սովետական պետական շինարարության հետագա զարգացումը և ՍՍՀՄ կազմավորումը կանխորոշեցին նաև ռազմական կազմակերպության ու բանակի շինարարության խնդիրները։ Առանձին հանրապետությունների բանակ-

---

1 «Խորհրդային Հայաստան», 1. XI. 1921։

2 «За власть Советов в Закавказье», Тбилиси, 1968, стр. 68.

ները վերակազմվեցին և միացվեցին Սովետական Ռուսաստանի Կարմիր բանակի հետ, որպես մեկ միասնական բանակ՝ միասնական հրամանատարությամբ, միասնական կանոնագրքերով և զինվորական գործի կազմակերպման ընդհանուր հիմունքներով։

Կուսակցության XII համագումարը խնդիր դրեց «հասնել այն բանին, որ ուժեղացվի դաստիարակչական աշխատանքը Կարմիր բանակում՝ Միության ժողովուրդների եղբայրության ու համերաշխության իդեաներ արմատավորելու ոգով և պրակտիկ միջոցառումներ ձեռնարկվեն ազգային զորամասերի կազմակերպման ուղղությամբ՝ այն բոլոր միջոցառումների պահպանմամբ, որոնք անհրաժեշտ են հանրապետությունների լիակատար պաշտպանությունն ապահովելու համար»[3]։ Համագումարն անդրադառնալով ազգային շինարարության խնդիրներին, ընդգծեց առանձին ազգային զորային կազմավորումների ստեղծման անհրաժեշտությունն ու ազգային փոքրամասնությունների մեջ կատարվելիք հատուկ աշխատանքի կարևորությունը բազմազգ զորամասերում։ «Մեր Կարմիր բանակը,—ասում էր Մ. Վ. Ֆրունզեն,—մենք երբեք չենք դիտել որպես «ռուսական բանակ», մի ազգության բանակ։ Նրա կորիզը, նրա ամբողջ հզորության հիմքը, իհարկե, կազմել է և կազմում է ռուս ժողովուրդը։ Բայց դա չի բացառել և չի բացառում Միության բոլոր ազգությունների իրավունքն ու պարտականությունը զենքը ձեռքին պաշտպանելու սովետական հողը։ Այդ պարտքը հավասարազոր է և լիակատար իրավահավասարության հիմունքներով պետք է տարածվի վերջին հաշվով նույնիսկ այն ժողովուրդների նկատմամբ, որոնք առաջներում զինվորական ծառայություն չէին կրում։ Այդ ուղիներով է ընթացել ազգային շինարարությունը Կարմիր բանակում և նավատորմում»։ Այնուհետև Մ. Վ. Ֆրունզեն ընդգծում էր, որ «ազգային զորքերը կազմում են Կարմիր բանակի օրգանական մասը։ Միության ազգերին հավասարաչափ ներգրավելով սովետական հայրենիքի պաշտպանության գործի մեջ, մենք նրանց ներկայացնում ենք միևնույն պահանջները, միատեսակ մարտական պահանջներ։ Մեզ համար ազգային զորամիավորումները զվարճանալու և ազգային քաղաքականությանը տուրք տալու նպատակով չեն ստեղծվում։ Ազգային զորամիավորումների ստեղծման գործին ճիշտ մոտեցում ունենալը կհանդիսանա մի գրավական մեր միութենական Կարմիր բանակի հզորությունն էլ ավելի ուժեղացնելու համար»[4]։

ՍՍՀՄ կազմավորման ժամանակ Հայկական ՍՍՀ, Վրացական ՍՍՀ և Ադրբեջանական ՍՍՀ Կարմիր բանակները վերակազմվեցին Հայկական, Վրացական և Ադրբեջանական հրաձգային դիվիզիաների՝ Կարմիր բանակի կազմում։ Հայկական դիվիզիան 1922 թ. վերանվանվեց 76-րդ հայկական լեռնահրաձգային դիվիզիայի և որպես հանրապետության ազգային զորային կազմավորում գոյություն ունեցավ մինչև 1938 թ.։ 1922—1930 թթ. դիվիզիայի հրամանատարն էր Ա. Մելիք-Շահնազարյանը, 1931—1937 թթ.՝ Հ. Աթոյանը, նրանից հետո կարճ ժամանակ՝ Ս. Ասոյանը և ապա Ն. Հովհաննիսյանը։ Գնդերի հրամանատարներ են եղել Ա. Միրիմանյանը, Դ. Մելիքովը, Մ. Գևորգյանը, Ն. Խուդաբաշյանը, Բ. Ավագյանը, Ա. Հովակիմյանը, Ս. Հովհաննիսյանը, Ա. Թերիզանովը, Հ. Բաղրամյանը, Ս. Կարապետյանը, Ի. Վեքիլյանը, Գ. Ջայլախյանը և ուրիշներ։

---

3 «ՍՄԿԿ-ն բանաձևերում...», մաս I, Երևան, 1954, էջ 915—916։

4 М. В. Фрунзе, Избранные произведения, М., 1965, стр. 205.

Հայկական դիվիզիային կից գործում էր հրամանատարական դպրոց, որը կոչվում էր Ալ. Մյասնիկյանի անունով։ Դպրոցում սովորել է մոտ 1000 սպա։ Հայրենական մեծ պատերազմի տարիներին դպրոցի սաներից 14 հոգի դարձան գեներալներ, 80 հոգի՝ գնդապետներ, 7 հոգի՝ Սովետական Միության հերոսներ[5]։

Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայում 1922—1938 թթ. ծառայել են 150 հազար մարդ և ձեռք բերել ռազմա-քաղաքական անհրաժեշտ գիտելիքներ։ 76-րդ հայկական դիվիզիայի շարքերում կոփված սպաներից Հայրենական մեծ պատերազմի տարիներին ավելի քան երեք տասնյակ մարդ դարձան սովետական բանակի գեներալներ։

1938 թ. մարտի 7-ին ՀամԿ(բ)Կ-ն և ՍՍՀՄ ԺողկոմսովետՍ որոշում ընդունեցին ազգային զորամասերի վերակազմավորման մասին։ Այդ որոշումից հետո դիվիզիան վերակազմավորվեց և դարձյալ մնաց Հայաստանում[6]։ Դիվիզիայի հրամանատար նշանակվեց փորձված զորապետ, գեներալ-մայոր Գորյունովը, զինկոմ՝ գնդային կոմիսար Գերվասեևը, իսկ քաղբաժնի պետ՝ ավագ գումարտակային կոմիսար Ի. Եվստիգնեևը։ Նշանակվեցին նաև գնդերի նոր հրամանատարներ և զինկոմներ։

Հայրենական մեծ պատերազմի սկզբից 76-րդ դիվիզիան նորից համալրվեց հիմնականում հայ մարտիկներով ու սպաներով։ Նրա անձնակազմի կեսից ավելին հայեր էին։

1941 թ. օգոստոսին դիվիզիան կատարեց սովետական կառավարության հատուկ առաջադրանքը Իրանում։ Հոկտեմբերյան ծանր օրերին դիվիզիան մեկնեց ռազմաճակատ և գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մարտի մտավ Պոլտավայի շրջանում։ 1941 թ. նոյեմբերին դիվիզիայի ռազմիկները հերոսական մարտեր էին մղում Վոլչանսկ քաղաքի շրջանում։ Այդ մարտերում ռուս զինվորների ու հրամանատարների հետ միասին, մարտական բարեկամությամբ կոփված հայ ռազմիկները և մյուս եղբայրական ժողովուրդների զավակներն անձնուրացաբար պայքարում էին ընդդեմ ֆաշիզմի, հանդես բերելով բարձր կազմակերպվածություն և օրինակելի կարգապահություն։ Դիվիզիան իրեն փառքով օծեց հատկապես Ստալինգրադի ճակատամարտի ժամանակ։ 1942 թ. նոյեմբերի 24-ին հրապարակվեց ՍՍՀՄ պաշտպանության ժողկոմի հրամանը 76-րդ հրաձգային հայկական դիվիզիան գվարդիական դիվիզիայի վերակազմելու մասին։ Հրամանում ասված էր.

«Մեր Սովետական Հայրենիքի համար, գերմանական զավթիչների դեմ մղվող մարտերում դիվիզիան ցույց տվեց արիության, խիզախության, կարգապահության և կազմակերպվածության օրինակներ։ Անընդհատ մարտեր մղելով գերմանական զավթիչների դեմ, 76-րդ հրաձգային դիվիզիան հսկայական կորուստներ է պատճառել ֆաշիստական զորքերին և իր կործանիչ հարվածներով ոչնչացրել հակառակորդի կենդանի ուժն ու տեխնիկան, անողոքաբար ջախջախել գերմանական զավթիչներին։ Հայրենիքի համար գերմանական զավթիչների դեմ մղվող մարտերում հանդես բերած կայունության, արիության, կարգապահության և կազմակերպվածության համար, անձնակազմի հերոսության համար 76-րդ հրաձգային դիվիզիան վերակազմել 51-րդ

---

5 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1972, № 1, էջ 27։

6 «КПСС о Вооруженных Силах Советского Союза», М., 1958, стр. 353.

գվարդիական հրաձգային դիվիզիայի (դիվիզիայի հրամանատար գնդապետ Թավարթիլաձե Նիկոլայ Բորիսովիչ)։ Վերակազմված դիվիզիային հանձնել գվարդիական դրոշ։ Հիշյալ դիվիզիայի հրամանատարական կազմի համար (բարձր և ավագ, միջին և կրտսեր) սահմանել մեկ և կես, իսկ շարքայինների համար՝ կրկնակի աշխատավարձ»[7]։

Դիվիզիայի մասին այլ առիթով ասված է. «Վոլգայի ափերին տեղի ունեցած մեծ ճակատամարտին մասնակցում էին նաև հատուկ ազգային միավորումներ, որոնցից հատկապես աչքի ընկան 38-րդ ղազախական դիվիզիան, որը հետո ստացավ 73-րդ գվարդիական-ստալինգրադյան անվանումը և 76-րդ հայկական լեռնահրաձգային դիվիզիան, որը 1942 թվականի նոյեմբերին վերակազմվեց 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի»[8]։

Հետագայում 51-րդ գվարդիական դիվիզիան մասնակցեց Օրյոլ-Բելգորոդի ճակատամարտին, հերոսական էջեր գրեց Վիտեբսկի և Պոլոցկի ազատագրման համար մղված մարտերում։ Պատերազմի ժամանակ դիվիզիայից 15 հոգի արժանացան Սովետական Միության հերոսի կոչման։ 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիան արժանացավ «Վիտեբսկյան» անվանմանը, իսկ նրա երկու գնդերին, որոնք Հայաստանում քաղաքացիական կռիվների ժամանակ ստացել էին «Լոռիյսկի» անվանումը, տրվեց նաև Պոլոցկյան՝ «Լոռիյսկի-Պոլոցկյան»։

Այսպիսով ՀՍՍՀ անդրանիկ զորային կազմավորումն անցավ փառավոր մարտական ուղի, և նրա զինվորները սուրը դրեցին պատյան միայն սովետական հայրենիքի թշնամու լիակատար ջախջախումից հետո։

Մյուս հայկական զորային կազմավորումը 390-րդ հրաձգային դիվիզիան է, որն ստեղծվել է Անդրկովկասյան զինվորական օկրուգի ռազմական խորհրդի 1941 թ. օգոստոսի 25-ի կազմակերպական ցուցումի հիման վրա[9]։ Ձևավորման շրջանում դիվիզիան բազմազգ միավորում էր և 1941 թ. վերջերին և 1942 թ. սկզբներին մասնակցեց Կերչի թերակղզու գրավման համար ծավալված դեսանտային գործողություններին։ 1942 թ. հունվարի կեսերից 390-րդ դիվիզիայի անձնակազմը համալրվեց հայ զինվորներով և դարձավ ՀՍՍՀ զորային կազմավորում։ Հայաստանի կոմկուսի Կենտկոմը 1942 թ. հունվարին մոբիլիզացրեց և Կերչ ուղարկեց 50 կոմունիստ ղեկավար աշխատողների, որոնցից էին Ե. Խաչատրյանը, Մ. Նալբանդյանը, Հ. Սոխիկյանը, Ա. Թադևոսյանը, Մ. Մանուկյանը, Խ. Նազարյանը, Ա. Մանուկյանը, Ս. Սարգսյանը և ուրիշներ[10]։ Դիվիզիայի հրամանատար նշանակվեց Ս. Զաքիյանը, զինկոմ՝ Թ. Շահինյանը, քաղբաժնի պետ՝ Ս. Թովմասյանը, իսկ հետո Լ. Վարդանյանը։ Դիվիզիայի կազմի մեջ մտնող 792-րդ գնդի հրամանատար նշանակվեց Լ. Ակոպովը, զինկոմ՝ Վ. Գրիգորյանը, 784-րդ գնդի հրամանատար՝ Ի. Եվստիգնեևը, զինկոմ՝ Շ. Ազնավուրյանը, 778-րդ գնդի հրամանատար Հ. Մինասյանը, զինկոմ՝ Ս. Սարգսյանը և այլն։ Դիվիզիայի հայերեն թերթի՝ «Հայկական սնայպերի» խմբագիրն էր Գ. Հովհաննիսյանը (Հովնան)։ Հրա-

---

7 «История 51-й гвардейской Витебской, ордена Ленина краснознаменной дивизии имени К. Е. Ворошилова», 1956, стр. 34—35.

8 «Краткая история СССР», т. 2, М., 1972, стр. 347.

9 «Բանբեր Երևանի համալսարանի», 1973, № 3, էջ 159։

10 Մշի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 1, ց. 31, գ. 304, թ. 304—306։

տարակվում էր նաև ռազմաճակատային «Մարտական գրոհ» թերթը, որի խմբագիրը սկզբում Ա. Մնացականյանն էր, իսկ հետո Բ. Շահումյանը։ Թերթը լուսաբանում էր Ղրիմի ռազմաճակատի կյանքը, մասնավորապես հայկական զորամասերի գործողությունները։

1942 թ. ապրիլին Կերչ ժամանեց Հայաստանի պատվիրակությունը, որը դիվիզիայի զորամասերին հանձնեց մարտական դրոշներ։ Դիվիզիայի ամբողջ անձնակազմը զինվորական երդում տվեց։ Այդ օրերին դիվիզիա ժամանեց նաև հայ գրողների պատվիրակությունը (Ն. Զարյան, Գ. Աբով և Սարմեն), որը Կերչում դրեց հայկական դիվիզիայի քայլերգի խոսքերը։

1942 թ. հունվար-մայիս ամիսներին դիվիզիան մղեց դաժան պաշտպանական մարտեր, երբեմն ձեռնարկելով հակագրոհներ։ Կերչի թերակղզում հակառակորդն ուներ կենդանի ուժի, տանկերի, ինքնաթիռների և հրետանու մեծ գերակշռություն։ Հաճախ հարկ էր լինում հետևակի ուժերով դիմադրել թշնամու տանկային գրոհներին։ Այդ օրերին ՍՍՀՄ պաշտպանության ժողկոմի տեղակալը Հայաստանի կոմկուսի Կենտկոմին ուղղված հեռագրում հայտնում էր, որ «Հայկական դիվիզիայի զորամասերը գնդապետ Զաքիյանի հրամանատարությամբ տոկունությամբ են կռվում գերմանական զավթիչների դեմ. մարտի 20-ին ետ մղվեց գերմանական 22-րդ տանկային դիվիզիայի գրոհը, որի ժամանակ հակառակորդը հսկայական կորուստներ կրեց։ Բանակի մյուս զորամասերի հետ հայ մարտիկներն այնպես ջախջախեցին թշնամուն, որ նա մարտի դաշտում թողեց 47 տանկ...»[11]։

Դիվիզիայի մղած բոլոր մարտերը կրում էին արյունահեղ բնույթ։ Մարտի 31-ին իր դիտակետում թշնամական արկից մահացու վիրավորվեց գնդապետ Ս. Զաքիյանը, որը մահացավ ապրիլի 2-ին։ Այդ առթիվ Հ. Բազրամյանը և Հ. Բաբաջանյանը գրել են. «...մեծ ցավով իմացանք, որ ընկեր Զաքիյանը լինելով փառապանծ 89-րդ, հետո 390-րդ հայկական դիվիզիաների հրամանատար, ընկել է քաջի մահով։ Այդ լուրը խորապես վշտացրեց մեզ։ Մենք մշտապես հպարտությամբ ենք հիշում հայ ժողովրդի հավատարիմ զավակի մարտական սխրանքները հանուն սոցիալիստական հայրենիքի պաշտպանության»[12]։

Զաքիյանի փոխարեն 390-րդ հայկական դիվիզիայի հրամանատար է նշանակվում գնդապետ Ի. Լյուդնիկովը (հետագայում գեներալ-գնդապետ)։ 1942 թ. մայիսի սկզբներից գերմանա-ֆաշիստական զորքերը մեծ ուժերով Կերչում ձեռնարկեցին նոր հարձակում։ 44-րդ, 47-րդ և 51-րդ բանակները, նրանց զորամասերի թվում նաև 390-րդ դիվիզիան Գերագույն գլխավոր հրամանատարության հրամանով թողեցին Կերչի թերակղզին և էվակուացվեցին Թաման։ Դրանից հետո 390-րդ դիվիզիան վերակազմվեց։ Նրա մարտական դրոշները հանձնվեցին Անդրկովկասյան ռազմաճակատի շտաբին, իսկ սպաներն ու զինվորներն ուղարկվեցին այլ զորամիավորումներ՝ շարունակելու մարտական ծառայությունը։

Հայկական զորային կազմավորումներից մեկն էլ 89-րդ հրաձգային (հետագայում՝ «Թամանյան») դիվիզիան էր, որի կազմավորումը սկսվեց

---

11 «Հայկական սնայպեր», 22. IV. 1942։

12 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետ, ֆ. 174, գ. 1։

1941 թ. դեկտեմբերին. նրա զորամասերը շուտով համալրվեցին։ Դեկտեմբերի 15-ին 89-րդ դիվիզիայի հրամանատար նշանակվեց գնդապետ Ս. Զաքիյանը։ Նա հաջողությամբ իրագործեց դիվիզիայի կազմակերպման խնդիրը և 1942 թ. փետրվարին ստացավ նոր նշանակում, իսկ 89-րդ դիվիզիայի հրամանատարությունը հանձնվեց փոխգնդապետ Ա. Սարդսյանին։ Դիվիզիայի կազմակերպման շրջանում զինկոմն էր ավագ գումարտակային կոմիսար Վ. Զումանովը, քաղբաժնի պետը՝ գումարտակային կոմիսար Ա. Կիրակոսյանը, շտաբի պետը՝ փոխգնդապետ Ա. Ղազարյանը։ Դիվիզիայի կազմի մեջ մտնող 390-րդ գնդի հրամանատար նշանակվեց մայոր Մ. Միրունյանը, զինկոմ՝ գումարտակային կոմիսար Հ. Ինճիկյանը, 400-րդ գնդի հրամանատար՝ մայոր Ս. Ասլանյանը, զինկոմ՝ ավագ քաղղեկ Ս. Բաղդասարյանը, 526-րդ գնդի հրամանատար՝ Ս. Խանջյանը, զինկոմ՝ ավագ գումարտակային կոմիսար Մ. Հայրապետյանը։ 531-րդ գնդի հրամանատար նշանակվեց մայոր Գ. Բաղիրովը, զինկոմ՝ Յու. Դավթյանը և այլն։

Դիվիզիայի կազմակերպումը կատարվում էր Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և հանրապետության կառավարության ակտիվ աջակցությամբ։ Կենտկոմը բանակի ղեկավար քաղօրգանների հետ միասին կազմավորում էր քաղապարատը, զորամասեր էր ուղարկում փորձված կուսակցական աշխատողներ։ Դրան զուգահեռ Կենտկոմը և կառավարությունը մոբիլիզացնում էին հանրապետության նյութական և տեխնիկական միջոցները։ Դիվիզիան լրիվ կոմպլեկտավորվեց մինչև 1942 թ. գարունը։ Մինչև 1942 թ. սեպտեմբերը դիվիզիայի զորամասերն անցան մարտական և քաղաքական պատրաստության դասընթաց։ 1942 թ. հունիսի 12-ին Երևանի Վ. Ի. Լենինի անվան հրապարակում տեղի ունեցավ 89-րդ դիվիզիայի զորահանդեսը, որի ժամանակ մարտական դրոշներ հանձնվեցին նրա զորամասերին։ Զորահանդեսի ժամանակ դիվիզիայի մարտիկները ծնկաչոք երդվեցին այդ դրոշները փառքով պսակել։

1942 թ. օգոստոսի 4-ին դիվիզիան Երևանից մեկնեց Գրոզնի և սեպտեմբերի 21-ին Թերեք գետի աջ ափին սկսեց իր մարտական ուղին, փոխարինելով 417-րդ դիվիզիային և 10-րդ գվարդիական բրիգադին։ Դիվիզիայի խնդիրն էր պաշտպանել Ալխան-Յուրտ հովիտը, ապա հակագրոհի միջոցով վերացնել Թերեք գետի աջ ափի գերմանական հենակետը և փակել դեպի Գրոզնի տանող ուղիներն այդ հատվածում։ Դիվիզիան 1942 թ. սեպտեմբերի 26-ին անցավ հարձակման։ Մարտերը կատաղի էին։ Այդ ընթացքում դիվիզիայի անձնակազմից 2347 հոգի սպանվեցին, վիրավորվեցին կամ անհայտ կորան[14]. 1942 թ. հոկտեմբերին դիվիզիայի հրամանատար նշանակվեց գնդապետ Ա. Վասիլյանը, զինկոմ՝ Խ. Հակոբջանյանը, քաղբաժնի պետ՝ Լ. Վարդանյանը։ Դիվիզիան վերախմբավորեց ուժերը և հոկտեմբերի 17-ից նորից մտնելով մարտի մեջ, մինչև 1942 թ. դեկտեմբերի վերջերը պաշտպանեց իր դիրքերը։ Պաշտպանական մարտերի այդ երկու ամիսների ընթացքում 89-րդ դիվիզիայի զորամասերը մղել են 35 մարտ և ոչնչացրել են թշնամու 1667 զինվոր ու սպա, մեծ քանակությամբ ռազմական տեխնիկա և տրանսպորտ։ Դիվիզիայի մղած պաշտպանական մարտերի շուրջ կան տարբեր կարծիքներ։ Մեզ համար կարևորը այդ մարտերի գլխավոր հանրագումարն է. 1942 թ. սեպտեմբեր-դեկ-

---

[13] Архив Министерства обороны СССР, ф. 987. оп. 480831, д. 1, л. 1—7.

[14] Նույն տեղում։

տեմբերին 89-րդ հայկական դիվիզիայի պաշտպանած բնագծում հակառակորդը ոչ մի կիլոմետր չի կարողացել առաջ շարժվել, դեպի Գրոզնի տանող ուղիներն ամուր փակվել են և պաշտպանվել հայկական զորամասերի և նրանց հարևան մյուս զորամասերի կողմից, խոշոր կորուստներ են պատճառել թշնամուն՝ նախապատրաստելով նրա ջախջախումը հետագա մարտերում։

89-րդ հայկական դիվիզիայի պատմության նոր շրջան սկսվեց 1943 թ. հունվարի 1-ից, երբ դիվիզիան և բանակի մյուս զորամասերն անցան հարձակման ու հունվարի 3-ին ազատագրեցին Մալգոբեկ քաղաքը և ապա սկսեցին հետապնդել նահանջող հակառակորդին։ Դիվիզիան անցավ 800 կմ դժվարին մարտական ճանապարհ՝ հաղթահարելով ձմռան ցուրտը, թշնամու դարանները և բնական խոչընդոտները, կրելով շատ զրկանքներ։ Այդ ընթացքում դիվիզիան ոչնչացրեց հակառակորդի 550 զինվոր ու սպա, գրավեց մեծ քանակությամբ զենք ու ռազմամթերք։ Դիվիզիան մասնակցեց Գեորգևսկ, Մինեբալնիե Վոդի, Դուբովայա Բալկա, Թաթարսկայա, Ստավրոպոլ, Տիխորեցկ, Պավլովսկայա, Կռիլովսկայա, Դարբուզովայա Բալկա և տասնյակ այլ քաղաքների ու հարյուրավոր բնակավայրերի ազատագրմանը[15]։

Փետրվարի 8-ին դիվիզիայի առաջապահ զորամասերն անցնելով Լիմանի ճահիճները՝ հասան Դարբուզովայա Բալկա բնակավայրը և կանգ առան, սպասելով մյուս զորամասերի ու թիկունքային ծառայությունների մոտենալուն։ 58-րդ բանակի հրամանատարությունից հրաման ստացվեց «Երկու գնդերով շարունակել հարձակումը, գրավել Նովոջիրելիևսկայա և Պոդի բնակավայրերը, այնուհետև դուրս գալ Ռոգովսկայա բնակավայրը»։ Դիվիզիայի հրամանատար, գնդապետ Ա. Վասիլյանն առաջարկում է հարձակումը շարունակել մնացած ստորաբաժանումների և սպասարկման ծառայությունների մոտենալուց հետո միայն։

Դիվիզիայի քաղբաժնի պետ Լ. Վարդանյանը ևս բանակի ռազմական խորհրդի անդամ Ա. Ուսենկոյին խնդրում է բավարարել դիվիզիայի հրամանատարի առաջարկը։ Սակայն լրացուցիչ օգնություն չի ստացվում, և դիվիզիայի հրամանատարությունը սկսում է հրամանի կատարումը։ 390-րդ գունդը՝ հրետգնդի մեկ դիվիզիոնի հետ աջ թևով հարձակվում է Նովոջիրելիևսկ կայարանի և գյուղի վրա։ Գնդի հետ էին դիվիզիայի հրամանատար Ա. Վասիլյանը և զինկոմ՝ Խ. Հակոբջանյանը։ 400-րդ գունդը՝ մեկ հրետանային դիվիզիոնի հետ հարձակվում է ձախ թևով՝ Պոդի գյուղի վրա։ Գնդի հետ էին դիվիզիայի հրամանատարի տեղակալ Ե. Կարապետյանը և քաղբաժնի պետ Լ. Վարդանյանը։ 526-րդ գունդը մնում է Դարբուզովայա Բալկայում, որպես ռեզերվ։ Դիվիզիան հարձակման է անցնում գիշերը, ցեխի ու ճահիճների միջով։ Փետրվարի 9-ի լույս 10-ի գիշերը 390-րդ գնդի ստորաբաժանումները գրավում են Նովոջիրելիևսկայա գյուղի մի քանի տներ։

Սակայն պարզվում է, որ գյուղում կան գերմանական մոտոմեքենայացված ուժեղ զորամասեր, որոնք նկատելով դիվիզիայի մոտեցումը Նովոջիրելիևսկայային, նախ ուժեղ հրետանային և ականանետային կրակ են բացում, հետո մարտի մեջ մտցնում գնդացրային ու ավտոմատավորների ստորաբաժանումներ։ Գնդի հրամանատար, մայոր Գ. Իսախանյանը զոհվում է։ Դիվիզիայի հրամանատար, գնդապետ Ա. Վասիլյանը փորձում է հանգստացող զինվորնե-

15 Նույն տեղում։

ին ոտքի հանել և մարտի տանել, սակայն չանցած մի քանի րոպե, երևում են հակառակորդի 16 տանկեր։ Ստեղծվում է ահավոր ծանր վիճակ։ Այդ ողբերդական պահին, դրել է դիվիզիայի շտաբի պետ Ֆ. Պոլտավեցը, Ա. Վասիլյանն անձամբ, զենքը ձեռքին նետվում է թշնամու դեմ և ոչնչացնում մի քանի ֆաշիստների։ Մարտիկներն ու հրամանատարները, քաջալերված դիվիզիայի հրամանատարի արիությամբ, սկսում են դիմագրավել թշնամուն[16]։ Այդ մարտում զոհվում է Ա. Վասիլյանը, որի մարտական ուղին սկսվել էր Բաքվի կոմունայի բարիկադներից։

400-րդ գնդի ստորաբաժանումները, հասնելով Պոդի բնակավայրը, ընդհարվում են գերմանական մոտոմեքենայացված զորամասի հետ, որն ուժեղ հակագրոհով կասեցնում է նրանց գրոհը։ 400-րդ գնդի ստորաբաժանումները ծանր կորուստներ են կրում[17]։

Վերադաս հրամանատարությունը և ՀԿԿ Կենտկոմը միջոցառումներ ձեռնարկեցին 89-րդ դիվիզիան համալրելու, նրա մարտունակությունը բարձրացնելու համար։ Դիվիզիայի հրամանատար նշանակվեց գնդապետ (հետագայում գեներալ-մայոր) Ն. Սաֆարյանը։ Դիվիզիան վերախմբավորեց ուժերը և պատրաստվեց նոր մարտերի։ Դրանից հետո սկսվեց դիվիզիայի պատմության նոր շրջանը, որն ընդգրկում է 1943 թ. աշնանը Թամանում և 1944 թ. առաջին կեսին Կերչում ու Սևաստոպոլում մղված մարտերին նրա ունեցած մասնակցությունը։ 1943 թ. օգոստոսին դիվիզիան մտնում է 18-րդ լեգենդար բանակի կազմի մեջ։ Սեպտեմբերի 3-ին դիվիզիայի զորամասերը մտնում են մարտի մեջ և մասնակցում Սախարնայա Գոլովա, Դուգայա, Վերխնի Բականսկ քաղաքների ու դրանց շրջանների ազատագրմանը, գրոհում են Նովորոսիյսկի ճանապարհներին թշնամու կառուցած պաշտպանական գծի վրա, իսկ 1943 թ. հոկտեմբերի 9-ին հաղթանակով ավարտում Թամանյան թերակղզու ազատագրումը և ստանում «Թամանյան» անվանումը։ Նոյեմբերի 21—25-ին դիվիզիան դեսանտով անցնում է Կերչի նեղուցը, մասնակցում քաղաքի և թերակղզու ազատագրման համար մղված ծանր մարտերին, իսկ 1944 թ. մայիսին՝ Սևաստոպոլի ազատագրմանը։ Դիվիզիայի երկու գնդերն արժանանում են «Սևաստոպոլյան» անվանման։

Փառապանծ 89-րդ Թամանյան դիվիզիայի պատմության վերջին շրջանն ընդգրկում է Լեհաստանի ազատագրման և Բեռլինի գրավման համար մղած մարտերը։ 1944 թ. օգոստոսին դիվիզիան Ղրիմից մեկնեց հյուսիս, մտավ 1-ին բելոռուսական ռազմաճակատի զորքերի կազմի մեջ, մասնակցեց Լեհաստանի տասնյակ քաղաքների ու շրջանների ազատագրմանը, այնուհետև աչքի ընկավ Օդեր—Ֆրանկֆուրտի հենակետում մղված մարտերում և, վերջապես, բարձր կազմակերպվածություն, վարպետություն ու անօրինակ հերոսություն հանդես բերեց Բեռլինի ճակատամարտում։

Դիվիզիան անցավ 3700 կմ պայքարի ուղի՝ Թերեքի ափերից մինչև Էլբա։ Այդ ընթացքում դիվիզիան ոչնչացրեց հակառակորդի 9000 զինվոր ու սպա, 148 տանկ, 300 հրանոթ, գերի վերցրեց 11 հազար զինվոր ու սպա և գրավեց մեծ քանակությամբ զենք ու զինամթերք։ 89-րդ Թամանյան դիվիզիայի անձնակազմից Հ. Ավետիսյանը, Ս. Առաքելյանը, Ջ. Կարախանյանը, Ս. Բաղդա-

16 Նույն տեղում։
17 Նույն տեղում։

սարյանը, Խ. Խաչատրյանը, Վ. Առուստամյանը, Ա. Հարությունյանը, Հ. Մը-կըրտչյանը և Հ. Բաբայանն արժանացան Սովետական Միության հերոսի կոչման, իսկ 7333 զինվոր ու սպա՝ կառավարական բարձր պարգևների։ 89-րդ Թամանյան հայկական դիվիզիան պարգևատրվեց Կարմիր աստղի, Կարմիր գրոշի և ապա՝ Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշաններով։

Հաջորդ հայկական զորային կազմավորումը 408-րդ հրաձգային դիվիզիան էր։ Այն կազմակերպվեց Երևանում՝ 1941 թ. ամռան ամիսներին։ Նրա կազմը համալրեցին սովետական բազմազգ ժողովուրդների զավակները։ 1942 թ. փետրվար-մարտին դիվիզիան վերակազմվեց հայկական զորային միավորման. փոխվեց նրա հրամանատարների, քաղաշխատողների և շարքային զինվորների կազմը։ Դիվիզիայի հրամանատարն էր գնդապետ Պ. Կիցուկը, զինկոմը՝ գնդային կոմիսար Ի. Գրիշինը, որը շուտով փոխադրվեց ուրիշ միավորում։ Հետագայում դիվիզիայի զինկոմ նշանակվեց Ա. Իսահակյանը։ Սկզբում դիվիզիայի քաղբաժնի պետի պարտականությունները կատարում էր ավագ քաղղեկ, ՀՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ Ա. Մուրադյանը։ Շուտով նա մեկնեց ռազմաճակատ, և դիվիզիայի քաղբաժնի պետ նշանակվեց ավագ գումարտակային կոմիսար Ս. Սարգսյանը, որը վերադարձել էր Կերչի ճակատից և արդեն թրծվել պատերազմի բովում։ Դիվիզիայի կազմի մեջ մտնող 663-րդ գնդի հրամանատարն էր մայոր Ս. Բաբայանը, զինկոմը՝ Գ. Մանուչարյանը, 670-րդ գնդի զինկոմն էր Գ. Մարինոսյանը, 672-րդ գնդի հրամանատարն էր մայոր Տ. Սայադյանը, զինկոմը՝ Վարդանյանը, հրետանային գնդի հրամանատար էր մայոր Ա. Եփրեմյանը, զինկոմը՝ Գ. Ավետիսյանը։ Դիվիզիայի անձնակազմի 80 %-ը կոմունիստներ և կոմերիտականներ էին։

1942 թ. սեպտեմբերի 13-ին դիվիզիան Երևանից մեկնեց ռազմաճակատ։ Դիվիզիային ճանապարհողների մեջ էր նաև Ավետիք Իսահակյանը, որը ողջերթի խոսքեր ասաց հայ ռազմիկներին։ Տուապսեում նրանց ընդունում է Սևծովյան զորախմբի ռազմական խորհրդի ներկայացուցիչ, բրիգադային կոմիսար Լ. Ի. Բրեժնևը։ Դիվիզիան մտնում է այն բանակի կազմի մեջ, որի հրամանատարն էր գեներալ մայոր (հետագայում մարշալ) Ա. Գրեչկոն։ Ռազմաճակատ հասնելու առաջին իսկ օրը գումարվում է դիվիզիայի կուսակցական ակտիվի ժողովը, որտեղ քննարկվում են դիվիզիայի մարտական խնդիրները։

1942 թ. սեպտեմբերի 16-ից դիվիզիայի զորագնդերը մարտի մեջ են մտնում Սև ծովի ափով դեպի Անդրկովկաս շարժվող հիտլերականների դեմ և պաշտպանում Տուապսեի մատույցները։ Հայկական դիվիզիայի գործողությունների մասին Սովետական Միության մարշալ Գրեչկոն գրել է. «Հակառակորդը շարունակում էր նետվել դեպի Տուապսե։ Ռեզերվները կենտրոնացնելով Գունայկայի շրջանում, նա հարձակում սկսեց Գոյտխի, Գեորգիևսկի ուղղությամբ։ Այդ տեղամասում պաշտպանվում էր 408-րդ հրաձգային դիվիզիան, որը ժամանել էր սովետա-թուրքական սահմանից։ Այդ դիվիզիան լավ կոմպլեկտավորված էր, բայց դեռևս չուներ մարտական փորձ։ Դիվիզիայի զբաղեցրած անտառային շրջանը պաշտպանության համար նախապատրաստված չէր, թեև դրա համար շափազանց հարմար էր։ Դիվիզիայի հրամանատար, գնդապետ Պ. Ն. Կիցուկը անհրաժեշտ միջոցառումներ չէր ձեռնարկել կայուն պաշտպանություն կազմակերպելու համար, չնայած այն բանին, որ դրա համար ութ օր ժամանակ էր ունեցել։ Հոկտեմբերի 14-ից 408-րդ հրաձգային

դիվիզիան մեկուսացված էր 18-րդ բանակի Շահումյանի ուղղությամբ կռվող հիմնական ուժերից և թիկունքներից, որոնք գտնվում էին Ինդյուկի շրջանում։ Սննդամթերքի և ռազմամթերքի գնդային նրա սուղ պաշարները չէին կարող ապահովել գործող ստորաբաժանումների նորմալ մարտը։ Մեկ գծի վրա մարտաշարով ձգված դիվիզիան, խորությամբ մարտակարգեր ստեղծելու համար չունենալով ուժեր, օջախային պաշտպանությամբ, վաշտերի հենակետերի միջև 1,5—2 կիլոմետր ճեղքվածքների առկայությամբ վեց օր անընդհատ պահում էր 25—30 կիլոմետրանոց գոտին, ամեն օր ետ մղելով հարձակվող թշնամու գրոհները...»[18]։

Դիվիզիայի զորամասերը մարտի մեջ են մտնում Ցեմեսկի ծովախորշից հյուսիս ընկած շրջանում, պաշտպանական դիրքեր գրավում Կաբարդինկայի և Բաբիչի լեռնանցքներում։ Հակառակորդի կատաղի գրոհները ետ մղելով՝ դիվիզիան հարկադրված նոր դիրքեր է գրավում Գելենջիկի մատույցներում և ապա Գոյտխի և Ինդյուկի լեռնանցքներում, պաշտպանելով Տուապսեի շրջանը։ Այդ մարտերում առանձնապես աչքի ընկան դիվիզիայի հրետանավորները, որոնց գործողությունները հմտորեն ղեկավարում էին մայոր Ս. Վարդանյանը, կապիտան Ա. Սուխարոկովը, դիվիզիոնների քաղաշխատողներ Գ. Բաղալյանը, Խ. Հակոբյանը և մյուսները։

1942 թ. նոյեմբերին սովետական բանակի Սևծովյան զորախմբի կազմում տեղի են ունենում մի շարք վերակազմություններ։ 408-րդ հայկական հրաձգային դիվիզիան վերակազմվում է 7-րդ հրաձգային բրիգադի, որը շարունակում է մասնակցել հարձակողական մարտերին, ազատագրելով Խոլմսկայա, Ախտիրսկայա, Աբինսկայա և Բերդովայա բնակավայրերը։

1943 թ. մայիսին այդ բրիգադը միացվում է 23-րդ դիվիզիային, ուղարկվում հյուսիս ու մասնակցում Կուրսկի ճակատամարտին և ապա Ուկրաինայի ու Լեհաստանի ազատագրման համար մղված մարտերին[19]։

409-րդ հրաձգային դիվիզիան կազմակերպվել է պատերազմի առաջին ամիսներին, Գերագույն գլխավոր հրամանատարության դիրեկտիվով[20]։ Կազմակերպական շրջանում դիվիզիայի հրամանատարն էր գնդապետ Ա. Վասիլյանը, զինկոմը՝ գումարտակային կոմիսար Ա. Հայրապետյանը, հրետանու պետը՝ գնդապետ Հ. Սարդսյանը, դիվիզիայի հրամանատարի տեղակալը՝ գնդապետ Ս. Ստեփանյանը։ Դիվիզիայի զորամասերը համալրված էին գլխավորապես հայ մարտիկներով։ Մինչև 1942 թ. աշունը դիվիզիան զբաղվում էր մարտական և քաղաքական ուսուցման խնդիրներով և պաշտպանում սովետական պետական սահմանը։

1942 թ. դեկտեմբերի սկզբներին դիվիզիայի զորամասերը մեկնում են Հյուսիսային Կովկաս և մտնում 44-րդ բանակի կազմի մեջ։ Այդ ժամանակ դիվիզիայի հրամանատարն էր գնդապետ Վ. Գլադկովը, 675-րդ հրաձգային գնդի հրամանատարը՝ կապիտան Տրեպետունը, որին հետո փոխարինեց մայոր Գուսևը։ 677-րդ հրաձգային գնդի հրամանատարն էր մայոր Մ. Գրիգորյանը, 684-րդ հրաձգային գնդի հրամանատարը՝ մայոր Ս. Դանիելյանը, 964-րդ հրետանային գնդի հրամանատարը՝ մայոր Ս. Ղազարյանը։

---

18 Ա. Ա. Գրեչկո, Ճակատամարտ Կովկասի համար, Երևան, 1969, էջ 241։
19 Ս. Մ. Սարգսյան, Այրվող անտառ, Երևան, 1965, էջ 41—239։
20 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 1, էջ 39։

Դիվիզիայի զորամասերը մասնակցում են Մոզդոկ, Գեորգիևսկ, Մինեբրալնիե Վոդի, Ստավրոպոլ, Արմավիր և տասնյակ ուրիշ քաղաքների ու հարյուրավոր բնակավայրերի ազատագրման համար մղված մարտերին, որոնք տևում են մոտ 4 ամիս։ Այդ ընթացքում դիվիզիան անցնում է մոտ 1000 կմ մարտական ուղի, Թերեքի ափերից հասնում Կուրանի բնագիծը, Թաման[21]։ Այդ մարտերում հերոսի մահով ընկան հայ ժողովրդի հարյուրավոր զավակներ, որոնցից էին դիվիզիայի հետախուզության պետ Ս. Այվազյանը, գումարտակի զինկոմ Գ. Խաչատրյանը, գնդի զինկոմ Ի. Թորոսյանը, մայոր Մ. Գուլյանը և ուրիշներ։ Կրասնոդարի երկրամասի Նիժնի Խուտորի դպրոցի բակում կառուցվել է հուշարձան կոթող, որի վրա փորագրված են 34 զոհվածների անուններ։ Դրանք հայկական դիվիզիայի այն զինվորների անուններն են, որոնք զոհվել են այդ խուտորի ազատագրման համար մղված հերոսական մարտերում։ Այդ քաջերին գլխավորել է Սերոբ Գևորգյանը։

1943 թ. ապրիլից մինչև 1944 թ. գարունը 409-րդ դիվիզիան մասնակցում է Ուկրաինայի ազատագրման համար մղված հերոսական մարտերին։ Այդ ժամանակ դիվիզիայի հրամանատարն էր գնդապետ Մ. Դոբրովոլսկին, որին հետո փոխարինեց գեներալ-մայոր Է. Գրեչանինը։ Դիվիզիան մասնակցում է Խարկով—Լաղովոյի շրջանում մղված կռիվներին և անցնելով Դնեպրը՝ հատկապես աչքի է ընկնում Կիրովոգրադ քաղաքի ազատագրման ժամանակ, ստանալով «Կիրովոգրադյան» անվանումը[22]։ Դիվիզիայի 1700 մարտիկներ և սպաներ պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով։ Սովետական Հայաստանի աշխատավորությանն ուղարկած նամակ-հաշվետվության մեջ և հրամանատարության փաստաթղթերում հատկապես շեշտված են դիվիզիայի կուսհանձնաժողովի քարտուղար մայոր Մ. Գուլյանի, դիվիզիայի հրամանատարի տեղակալ գնդապետ Ս. Ստեփանյանի, Սովետական Միության հերոս Գ. Հայրապետյանի, մայոր Ա. Հարությունյանի, կապիտան Գ. Սահակյանի, ավագ լեյտենանտ Գ. Կարապետյանի և ուրիշների մարտական սխրագործությունները։ 1944 թ. ապրիլին 409-րդ «Կիրովոգրադյան» հայկական դիվիզիան անցնում է Պրուտ գետը և մասնակցում Յասսի—Քիշնևի մոտ շրջապատումից խուսափած հիտլերականների ոչնչացմանը։ Դիվիզիան այնուհետև հաղթական մարտերով հակառակորդին հետապնդում է Ռումինիայի, Հունգարիայի և ապա Չեխոսլովակիայի տերիտորիայում, մասնակցելով այդ երկրների ազատագրման համար մղված հերոսամարտերին։ Դիվիզիայի մարտական ուղին հարուստ է հերոսության բազմաթիվ օրինակներով։ Այսպես, օրինակ, դիվիզիայի հրետանու պետ, գնդապետ Հ. Սարգսյանը, որն իր մարտական ուղին սկսել է Բաքվի կոմունայի պաշտպանության օրերին և պատերազմի ժամանակ հրմտորեն ղեկավարել 409-րդ և ապա 228-րդ դիվիզիաների հրետանու գործողությունները, մեծ հաղթանակի նախօրյակին Սլովակիայի Սերովո բնակավայրում նետվելով ձեռնամարտի, խոցում է 5 հիտլերականի և ինքն էլ զոհվում այդ հերոսամարտում[23]։ Այդպիսի հերոսների արյամբ է գրված 409-րդ «Կիրովոգրադյան» դիվիզիայի պատմությունը։

---

21 «Սովետական Հայաստան», 4. II. 1944։

22 «Правда», 9.1.1944.

23 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետ, ֆ. 195, գ. 1։

Անդրկովկասյան ռազմաճակատի զորամիավորումներից էր 261-րդ հրաձգային դիվիզիան։ Այն կազմավորվեց 1942 թ. դեկտեմբերին՝ Հայաստանում։ Սկզբում դիվիզիայի հրամանատարն էր գեներալ-մայոր Մասլովը։ Հետագայում կարճ ժամանակով նրան փոխարինեց գնդապետ Վոլկովիչը, այնուհետև դիվիզիայի հրամանատար նշանակվեց գնդապետ Բ. Միտոյանը և ապա գնդապետ Ն. Բալոյանը։

Դիվիզիան մինչև պատերազմի ավարտը պաշտպանում էր ՍՍՀՄ պետական սահմանը։ Ամեն ամիս դիվիզիան համալրվում էր նոր մոբիլիզացված մարտիկներով, որոնք տիրապետելով ռազմական գործին մեկնում էին ռազմաճակատ։ Դիվիզիայի հրամանատարությունը ջանքեր չէր խնայում նորեկների ուսուցումը բարձր հիմքերի վրա դնելու համար։ Առանձնապես արդյունավետ էր դիվիզիայի քաղբաժնի գործունեությունը։ Ղեկավար քաղաշխատողներ Լ. Շահբազյանը, Ա. Կանանովը, Ա. Գասպարյանը, Գ. Ստեփանյանը և ուրիշներ ամեն ինչ անում էին մարտիկների քաղաքական դաստիարակությունը և զորամասերի մարտունակությունը բարձրացնելու համար։

261-րդ հայկական դիվիզիան ըստ էության պահեստային զորամիավորման դեր կատարեց և հանդիսացավ մի դպրոց, որով անցան հազարավոր մարտիկներ։

Այսպիսին է ՀՍՍՀ զորային կազմավորումների համառոտ պատմությունը, որն արժանի է հատուկ ուսումնասիրության։ Այդ պատմությունը Սովետական Հայաստանի պատմության անբաժան մասն է, սոցիալիստական հայ ազգի պատմության փառապանծ դրվագներից մեկը, ինչպես նաև սովետական բանակի պատմության մի էջը։

Հայտնի է, որ Հայրենական մեծ պատերազմի տարիներին սովետական զինված ուժերի կազմը համալրած հայ զինվորների թիվը կազմել է 500 հազար[24]։ Այդ զինվորների ընդամենը 20 %-ն է համալրել ՀՍՍՀ ազգային զորային կազմավորումները, իսկ մնացած 80 %-ը ծառայել է սովետական բանակի այլ զորամասերում։ Թե՛ հայկական դիվիզիաների, և թե՛ սովետական բանակի բազմազգ զորամիավորումների կազմում հայ ժողովրդի զավակները դրսևորեցին լիակատար նվիրվածություն սովետական հայրենիքին, հավատարմություն՝ ժողովուրդների եղբայրության դաշինքին։

Սովետական Միության մարշալ Գ. Ժուկովը գրել է. «Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովուրդը արժանի ավանդ է ներդրել հիտլերյան Գերմանիայի դեմ մղված պայքարում։ Հայ ռազմիկները՝ զինվորից սկսած մինչև մարշալն իրենց պսակել են կոմունիզմի համար, Վլադիմիր Իլյիչ Լենինի գաղափարների համար անվեհեր մարտնչողների անթառամ փառքով»[25]։

Այդ գնահատականը ճիշտ է բնութագրում հայ ժողովրդի զավակների ներդրած ավանդը մեր բազմազգ սոցիալիստական հայրենիքի պաշտպանության գործում։ Դա հնարավոր դարձավ շնորհիվ ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական բարեկամության, հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած արմատական սոցիալիստական վերափոխումների, շնորհիվ այն մեծ ջանքերի, որ գոր-

---

24 «Սովետական Հայաստանի 50-տարին», Երևան, 1972, էջ 53։

25 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետ, ֆ. 195, գ. 1։

ծաղրել և գործադրում է լենինյան կուսակցությունը մեր երկրի բազմազգ ժողովուրդների նոր սերունդներին սոցիալիստական հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու համար։

ИЗ ИСТОРИИ ВОИНСКИХ ФОРМИРОВАНИЙ АРМЯНСКОЙ ССР

А. Н. МНАЦАКАНЯН

Резюме

После установления Советской власти в Армянской ССР началось формирование ее войсковых частей в составе Вооруженных Сил Советского Союза. В период мирного социалистического строительства существовала одна армянская дивизия, сыгравшая важную роль в деле подготовки национальных военных кадров. В годы Великой Отечественной войны были организованы несколько армянских дивизий, которые участвовали в боях на Крымском, Закавказском, Северо-кавказском, Сталинградском фронтах. Некоторые армянские дивизии вписали героические страницы в историю боев за освобождение Украины и Прибалтики, сражений за взятие Будапешта и Берлина.